



Ա. ԽԵԿՐԱՍՈՎ

# ՓԵՂԱՍ ԳԵՐԵԲԱԿ


891.710.  
ε-50

ՀԱՅԱՍՏԱՆԻ

391715  
750

ԱՎ

30 MAY 2011




Ն. ՆԵԿՐՈ.ՍՈՎ.

## ԲՐԴՈՏ ԳԵՆԵՐՈԼ

ՆԿԱՐՆԵՐԸ Ա. ԿՐԱՎՈՒՆՅԱՆԻ

Ուսուելից Բարդմաննեց՝  
Հ. ՀԱՅՐԱԳԵՏՅԱՆ



ZN391715  
ՀՀԿ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿՈՒՍԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
1940

Պատմմբագիր՝  
Գ. Սարյան  
Տեխ. խմբագիր՝  
Աս. Ալբունյան  
Արքագրիչ՝  
Ա. Փարսադանյան

Վ. 2709. Հրամ. 5381.

Պատվիր 793. Տիրաժ 4000.

Հանձնված է արտադր. 29/XI 1940 թ.

Ստորագրվ. ապագր. 17/XII 1940 թ.

Հայոց Հանրապետության, Երևան, Լենինի, 65



122/4

Խ. Նեկրաց  
ГЕНЕРАЛ ТОПТИГИМ  
ԱրմԴԽ. Երևան, 1940 թ.



Զմռան մի օր, իրիկվան զեմ  
Մի պատանի կառապան,  
Էն բորանին, ցըտին, քամուն,  
Ետ էր դառնում կայարան,

Կառապանը չեր շտապում,  
Ուժեղ էին ձիերը,  
Ճանապարհը խորդ ու բորդ էր,  
Անթիվ էին փոսերը.

Կառապանը եկավ, հասավ  
Մի արջի, մի գյուղացու:  
— Ե՞յ, կառապան, արի դու մեղ  
Սահնակի մեջ նստեցրու:

— Ի՞նչ ես ասում, արջ ու սահմակ:

— Արջս խեղճ է ու խելոք,  
Դրա համար քեզ մի բաժակ  
Օղի կտամ ավելորդ:

Խելոք արջը և գյուղացին  
Սահմակի մեջ նստեցին,  
Առաջ անցան ճամփի մոտի  
Գինետան մոտ կանգնեցին:

«Այստեղ մի քիչ դու սպասիր», —  
Ասաց արջին գյուղացին, —  
Յած իջնելով պատանու հետ  
Գինետունը գնացին:

Մեր ծեր արջը խելոք, հանգիստ,  
Սահմակի մեջ միայնակ  
Թաթն էր լիզում և իր շղթան  
Չխչխկացնում շարունակ:



Մի ժամ անցավ, նրանք չկան,  
Չեն կշտանում խմիչքից,  
Բայց սովոր են ձիաները.  
Չեն էլ շարժվում տեղերից:

Մթնեց, ցուրտը շատ սաստկացավ,  
Մրսեց արջը բարկացած,  
Չիաները դողդողացին,  
Արջը բարձր մոնչաց:

Այդ լսելով ձիաները  
Ոկանչները ցցեցին,  
Սահնակն առած ձյունոտ ճամփով  
Բոլոր ուժով վազեցին:

Կառապանը գինետանը  
Լսեց ձայնը զանգակի,  
Դուրս սլացավ, բայց իզուր էր՝  
Էլ չհասավ սահնակին:



Սլանում էր ձյունոա ճամփով  
Սահնակն արագ թափ տռած,  
Դար ու փոսում մոնչում էր  
Բրդոտ արջը գաղաղած:

Դեմից եկող մարդիկ ու կին  
Պոռում էին ահարեկ.  
«Գեներալ է անցնում շտապ,  
Ճանապարհը մաքրեցեք»:

Զիաները խիստ վախեցած  
Վազում էին քամու պես,  
Հոգնել էին, էլ ուժ չկար.  
Անցել էին տասնհինգ վերստ:

Ուզիղ դեպի կայարանն են  
Ուժեղ թափով սլանում,  
Սկուկ արջուկն էլ սահնակում  
Իր գլուխն էր օրորում:



Օրորում էր, որ, երսի,  
իր շղթայից ազատվի:

Եվ կանգնեցին ձիաները  
Կայարանի առաջին:  
Ու դուրս եկավ ինքը, պետք,  
Դիմավորի ճամփորդին:

Տեսավ մի մեծ, հաստիկ ճամփորդ,  
Հազած երկար կոշիկներ,  
Շփոթմունքից չնկատեց,  
Որ շրթունքն են շղթայել:

Եվ մտածեց. «Ո՞ւր ես, ուր ես,  
Ոյ անիծված կառապան»,  
Ու նկատեց, որ եկողը  
Իներալի է նման:



Գլխարկն առավ, տուաջ զնաց,  
Դեներալին նա ասաց.  
«Բարե, ձերդ գերազանցություն,  
Ի՞նչ եք ուզում, օղի՞, թե՞յ»:

Այստեղ արջը բոլոր ուժով  
Ամպի նման որոտաց,  
Գետը լսեց, սիրտը ճաքեց,  
Եվ իր մաքում նա ասաց.

«Այս քառասուն տարի է, որ  
Ծառայում եմ բարեխիղճ,  
Բայց այսպիսի խիստ գեներալ  
Չի՛ պատահել երբեք ինձ»:

Կառապաններն էլ վազեցին,  
Նույնպես տեսան ճամփորդին,  
Փողովուրդն իրար անցավ,  
Հավաքվեցին, ասացին».



«Գեներալը մարդկանց առաջ  
Մոնչում է ինչպես արջ»:

Վախկոտները փախան ահից,  
Սրտոտները մնացին,  
Պետը ահից սիրտը ճաքած  
Գնաց առաջ ու ասաց.

«Խնդրեմ, ձերդ գերազանցություն,  
Շնորհ արեք, գնանք տուն»:

Այստեղ կրկին արջը հուզված  
Ավելի խիստ մոնչաց,  
Եվ բոլորը պետի հետ պնտկ,  
Հեռու փախան սարսափած:

Մոտ երկու ժամ սահնակի մեջ  
Էն գեներալը մնաց,  
Մինչև տերն ու կառապանը  
Եկան հասան վազեվաղ:



Արջի տերը ժողովրդին  
Պատմեց՝ ինչ է պատահել,  
Եվ ծեծելով իր մահակով  
Սկսեց արջին դուրս հանել:

Գետն էլ խսկույն ուշքի եկավ,  
Անցան երկյուղ և հուզում,  
Խիստ հայրոյեց կառապանին  
Եվ անվանեց անասուն...



1221  
41

4392

956c 1D.